



ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2022թ. միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2022թ. 4-րդ եռամսյակի գեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

<p>Հակոբ Անդրեասյան (անուն, ազգանուն)</p>	<p>Գլխավոր գործադիր տնօրեն (պաշտոն)</p>		<p><i>[Signature]</i> (ստորագրություն) 20.02.2023թ. (ամսաթիվ)</p>
<p>Ստյոպա Զաքինյան (անուն, ազգանուն)</p>	<p>Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)</p>	<p><i>[Signature]</i> (ստորագրություն) 20.02.2023թ. (ամսաթիվ)</p>	
<p>Արմեն Հակոբյան (անուն, ազգանուն)</p>	<p>Գլխավոր հաշվապահ (պաշտոն)</p>	<p><i>[Signature]</i> (ստորագրություն) 20.02.2023թ. (ամսաթիվ)</p>	



«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

բաց բաժնետիրական ընկերություն

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ**

2022 ԹՎԱԿԱՆ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

2022թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ և իր դուստր ընկերությունների (այսուհետ՝ Բանկ) համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ակտիվները կազմել են 666.0 մլրդ ՀՀ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 119.1 մլրդ ՀՀ դրամով կամ 21.8%-ով:

Բանկի ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկել հաճախորդներին տրամադրված վարկերին (ներառյալ ֆինանսական լիզինգը)՝ 31.12.22թ.-ի դրությամբ կազմելով ակտիվների շուրջ 69.0%-ը: Բանկի վարկային պորտֆելը տարեսկզբի նկատմամբ աճել է 90.5 մլրդ ՀՀ դրամով կամ 24.5%-ով՝ 31.12.22թ.-ին կազմելով 459.5 մլրդ ՀՀ դրամ: Նշենք, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Բանկի կողմից ՀՀ դրամով տրամադրված վարկերի կշիռը ընդհանուր պորտֆելում կազմել է 77.0%:

Բանկի դրամական միջոցները (կանխիկ դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ Կենտրոնական Բանկում և այլ թղթակից Բանկերում) 31.12.22թ.-ի դրությամբ կազմել են 104.8 մլրդ ՀՀ դրամ, որը կազմել է Բանկի ընդհանուր ակտիվների 15.7%-ը:

Բանկի պարտավորությունները տարեսկզբի նկատմամբ աճել են 96.3 մլրդ ՀՀ դրամով կամ 21%-ով՝ 31.12.22թ.-ին կազմելով 555.0 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդների պորտֆելը 31.12.2022թ. դրությամբ կազմել է 371.6 մլրդ ՀՀ դրամ: Ընդ որում, հաճախորդների տեղական արժույթով ցպահանջ և ժամկետային ավանդների պորտֆելի կշիռը

ընդհանուր ավանդային պորտֆելում կազմել է շուրջ 50%-ը: Ավանդների կառուցվածքն ըստ ժամկետայնության հետևյալն է. ժամկետային ավանդները կազմել են ավանդային պորտֆելի 54.0%-ը, իսկ ցպահանջ ավանդները՝ 46.0%-ը:

Միաժամանակ ՀՀ Կենտրոնական բանկի և Կառավարության, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները 31.12.22թ.-ին կազմել են 152.7 մլրդ ՀՀ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 12.2%-ով:

31.12.22թ.-ի դրությամբ Բանկի կապիտալը կազմել է 111.0 մլրդ ՀՀ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 22.8 մլրդ ՀՀ դրամով: Կապիտալի աճը հիմնականում պայմանավորված է տարվա ընթացքում գեներացված շահույթով: Նշենք նաև, որ Բանկը 2022 թվականի ընթացքում 3.3 մլրդ ՀՀ դրամի շահութաբաժին է վճարել իր բաժնետերերին:

Եկամուտների և ծախսերի հիմնական ցուցանիշներ

Բանկի զուտ տոկոսային եկամուտները 31.12.2022թ.-ի դրությամբ կազմել են 32.6 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով տարվա ընթացքում 27.6%-ով:

Դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով ստացված տոկոսային եկամուտը կազմել է շուրջ 54.8 մլրդ ՀՀ դրամ: Ներդրումային գործառնություններից տոկոսային եկամուտը կազմել է 1.6 մլրդ ՀՀ դրամ:

Միաժամանակ, ստացված զուտ կոմիսիոն վճարները կազմել են 5.5 մլրդ ՀՀ դրամ՝ 45.5%-ով գերազանցելով նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի ցուցանիշը:

Առևտրային գործառնություններից ստացված զուտ եկամուտները կազմել են 13.3 մլրդ ՀՀ դրամ՝ ավելի քան 5 անգամ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է առկա աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված արտարժույթի մեծ ներհոսքով և մարժաների մեծացմամբ:

Արդյունքում Բանկի գործառնական եկամուտները, նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ, աճել են 19.8 մլրդ ՀՀ դրամով (56.7%-ով)՝ կազմելով 54.8 մլրդ ՀՀ դրամ:

Ընդհանուր վարչական և այլ գործառնական ծախսերը կազմել են 30.3 մլրդ ՀՀ դրամ: Բանկի աշխատակիցների քանակը տարվա վերջի դրությամբ կազմել է 1,675:

Բանկը 2022թ.-ի արդյունքով ունեցել է 2.7 մլրդ ՀՀ դրամ զուտ վերադարձ՝ նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի 0.2 մլրդ ՀՀ դրամ զուտ վերադարձի փոխարեն:

Արդյունքում, 2022թ.-ի արդյունքով Բանկն ունեցել է 22.7 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Բանկի ակտիվների շահութաբերությունը դիտարկվող ժամանակահատվածի արդյունքներով կազմել է 3.8%, իսկ կապիտալի շահութաբերությունը՝ 22.8%:

Մրցակցային դիրքի վերլուծություն

2022թ.-ի վերջի դրությամբ ՀՀ-ում գործել են 18 առևտրային բանկեր, որոնց մասնաճյուղերի քանակը կազմել է 565, իսկ աշխատակիցների ընդհանուր թիվը՝ շուրջ 13 000 մարդ:

2022թ.-ի ընթացքում բանկային համակարգում արձանագրվել է ակտիվների 18.3% աճ, վարկային պորտֆելի 2.8% աճ, հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 28.7% աճ և կապիտալի 38.8% աճ: Նույն ժամանակահատվածում, Բանկը արձանագրել է հետևյալ ցուցանիշները. ակտիվների ավելացում՝ 21.8%-ով, հաճախորդներին տրված վարկերի աճ՝ 24.6%-ով, հաճախորդների նկատմամբ պարտավորությունների աճ 24.6%-ով և կապիտալի աճ 25.9%-ով:

2022թ.-ի վերջի դրությամբ ակտիվների գծով Բանկի մասնաբաժինը կազմել է 7.9%, վարկերի գծով՝ 11.0%, իսկ ավանդների գծով՝ 7.4%:

Ստորև ներկայացված են Բանկի հիմնական մրցակցային առավելությունները:

- Տոկոսային եկամուտների գեներացման կարողություններ (արտահայտված տոկոսային մարժայով):

2022թ.-ի վերջի դրությամբ զուտ տոկոսային մարժայի մեծությամբ Բանկը եղել է 1-ին տեղում: Բանկի տոկոսային մարժան հաշվետու ժամանակահատվածի տվյալներով կազմել է 6.2%՝ գերազանցելով մրցակից Բանկերի միջին ցուցանիշը 4.2 տոկոսային կետով: Բանկը տոկոսային սպրեդով (եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն–ծախսատար պարտավորությունների ծախսատարություն) ևս եղել է 1-ին տեղում:

- *Վարկային պորտֆելի առավել ցածր դոլարիզացիա:*

Հայաստանում 2022թ.-ի դեկտեմբերի վերջի արդյունքներով ռեզիդենտների արտարժույթային վարկերի և ռեզիդենտների ընդհանուր վարկերի հարաբերակցությունը կազմել է 35.5%: Տարեվերջի դրությամբ Բանկի կողմից արտարժույթով տրամադրված վարկերի կշիռը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի շուրջ 23%-ը:

- *Կապիտալիզացիայի բարձր մակարդակ:*

31.12.22թ.-ի դրությամբ Բանկի կապիտալը տարեսկզբի նկատմամբ աճել է 22.8 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 111.0 մլրդ ՀՀ դրամ՝ Բանկային համակարգում զբաղեցնելով 4-րդ տեղը: Բանկի հիմնական և ընդհանուր կապիտալների համարժեքության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 16.26% և 16.97%՝ զիջելով մրցակից Բանկերի միջին ցուցանիշին համապատասխանաբար 0.6 և 1 տոկոսային կետերով:

Վարկանիշ

2022 թվականի դեկտեմբերին, հեղինակավոր Ֆիթչ վարկանիշային գործակալությունը (Fitch Ratings) վերահաստատել է Բանկին շնորհված «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» B+ կայուն հեռանկարով վարկանիշ:

Fitch-ի հրապարակած զեկույցում նշված է, որ Բանկը նման գնահատականի արժանացել է շնորհիվ ներքին ֆինանսական կենսունակության և իրացվելիության, ինչպես նաև բարենպաստ տնտեսական միջավայրի ստեղծման:

Fitch-ի կողմից հրապարակված հաշվետվությունում ընդգծվում է ընթացիկ տարում բանկի ակտիվների որակի բարելավման և գործառնական շահույթի նշանակալի աճի մասին: Գործակալությունը նաև նշում է բանկի կապիտալիզացիայի բարձր

մակարդակի մասին, որը զգալիորեն գերազանցում է կարգավորողի նվազագույն պահանջները, ինչն էլ հաստատում է բանկի կենսունակության բարձր մակարդակը:

Հետագա զարգացման նկարագիր

Առաջիկա տարիներին Բանկի ծառայությունները կթիրախավորվեն հաճախորդների երեք հիմնական սեգմենտների (Գյուղատնտեսական, Մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ) վրա: Մասնակցելով ՀՀ կառավարության՝ գյուղատնտեսությանը աջակցման ծրագրերին, Բանկը կտրամադրի գյուղատնտեսական վարկեր հիմնականում ՀՀ մարզերում՝ միջին և խոշոր գյուղացիական տնտեսություններին, գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններին, ինչպես նաև Բանկը իր սեփական միջոցներով կշարունակի վարկավորել ինչպես մանր, այնպես էլ միջին և խոշոր գյուղացիական տնտեսություններին: Առևտրային վարկերը կտրամադրվեն հիմնականում արտադրության, առևտրի և ծառայությունների ոլորտների իրավաբանական անձանց և ձեռնարկատերերին:

Բանկի գործունեության կարևորագույն ուղղություններից է նաև հիմնական ավանդների կայուն բազայի ընդլայնումը: Բանկը կշարունակի ավելացնել ցպահանջ և ժամկետային ավանդները ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Նպատակ ունենալով զարգացնել կապիտալի շուկան ՀՀ-ում՝ Բանկը իրականացնում է ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով պարտատոմսերի թողարկում, որը առաջիկա տարիներին կրելու է շարունակական բնույթ:

Հաճախորդների անընդհատ զարգացող պահանջները բավարարելու և մրցակցային առավելություն ապահովելու նպատակով, ֆինանսական համակարգը ենթարկվում է զգալի փոփոխությունների: Համաձայն միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների՝ հաշվի

առնելով ֆինանսական ոլորտում տեղի ունեցող զարգացումները, հաջորդ տասնամյակի ընթացքում Բանկերը առերեսվելու են մի շարք նորարական մարտահրավերների, որոնց վրա էական ազդեցություն կունենան հետևյալ գործոնները՝ հաճախորդների նոր տեսակի պահանջմունքների ձևավորումը, մեքենայական ուսուցման և արհեստական բանականության կիրառումը ֆինանսական ոլորտում, ֆինանսաԲանկային կազմակերպությունների կենտրոնացումը թվային Բանկային փորձի և ամբողջական թվայնացման վրա, ինչպես նաև կիրքեռանվտանգությունը:

Վերոնշյալ գործոնները էական ազդեցություն կունենան նաև հայաստանյան Բանկային շուկայի վրա: Սույն գործոններով պայմանավորված՝ մարտահրավերներին դիմակայելու և դրանց շնորհիվ մրցակցային առավելություն ստանալու համար Բանկի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները՝

- Սպասարկման ցանցի օպտիմալացում Anytime-anywhere (online) հասանելիության ապահովման նպատակով: Սպասարկման ցանցի օպտիմալացումը պայմանավորված կլինի մասնաճյուղային, Բանկոմատային ցանցի և հատկապես ինքնասպասարկման ուղիների վերազինմամբ և զարգացմամբ՝ հաճախորդներին առաջարկվող Բանկային ծառայություններից օգտվելու հասանելիության և հարմարավետության բարձրացման նպատակով: Փոփոխությունները միտված կլինեն համապատասխանելու շուկայի դեմոգրաֆիկ և հաճախորդների վարքագծային փոփոխություններով պայմանավորված պահանջներին,
- Մեքենայական ուսուցման և արհեստական բանականության կիրառումը կնպաստի մեծ ծավալի տվյալների արագ և ճշգրիտ վերլուծությանը, ինչը հնարավորություն կտա բացահայտել ֆինանսաԲանկային շուկայի ծառայությունների և սպասարկման նկատմամբ հաճախորդների կարիքները

և այդ կարիքներին բավարարող թիրախային լուծումներ առաջարկել: Ավելին, վերոնշյալ տեխնոլոգիաների կիրառմամբ կստեղծվեն հաճախորդների հետ հաղորդակցման նոր ուղիներ, ինչը կնպաստի հաճախորդների կողմից բարձրացրած խնդիրների ավելի արագ արձագանքմանը, հետադարձ կապի ուժեղացմանը և հաճախորդների փորձի բարելավմանը,

- Բանկի կենտրոնացումը թվային Բանկային փորձի և ամբողջական թվայնացման վրա արտահայտված է տարատեսակ նորարական լուծումների կիրառությամբ և դրանց զարգացմանը նպաստող միջավայրի ստեղծմամբ: Սա թերևս ֆինանսաԲանկային ոլորտի առջև ծառայած մարտահրավերներին դիմակայելու կարևորագույն լուծումներից մեկն է, որը տալիս է բազում հնարավորություններ սպասարկման որակի և արագության լավացման, ամենուր-ամենժամ հասանելիության ապահովման, ինչպես նաև շուկայում ավելացող տեխնոլոգիական՝ ոչ տրադիցիոն ֆինանսաԲանկային գործունեություն իրականացնող, մրցակիցների հետ պայքարելու առումով: Ավելին, տարատեսակ նորարարական լուծումները հնարավորություն կտան ինչպես զգալիորեն կրճատել գործառնական ծախսերը, այնպես էլ բացահայտել նոր շուկաներ՝ ընդլայնելով գործունեության աշխարհագրությունը և կոմպենսացնել ներքին շուկայի սահմանափակությամբ պայմանավորված ռիսկերը,
- Առաջնահերթության տեսանկյունից կիբեռանվտանգությունը շարունակում է Բանկի համար մնալ կարևորագույն ուղղություններից մեկը: Հաշվի առնելով այն, որ մեր առօրյայում թվային տեխնոլոգիաների առկայության մեծացմանը զուգընթաց աճում են նաև կիբեռսպառնալիքները, անհրաժեշտություն է առաջանում մեծացնել տեղեկատվական անվտանգության շրջանակը և երբեմն էլ կանխատեսել սպառնալիքների զարգացման ուղղությունը և կանխարգելման գործիքներ կիրառել՝ կանխել վտանգը մինչև դրա առաջանալը: Բանկը, ելնելով իր որդեգրած քաղաքականությունից, այս

ոլորտում նույնպես հանդիսանում է առաջամարտիկներից մեկը, որ հայտ է ներկայացնում լինելու անվտանգության համայնքի լոկոմոտիվը:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ռուս-ուկրաինական ռազմաքաղաքական հակամարտության սրմամբ, որպես վերջինիս հետևանք՝ էներգակիրների գների բաժրացմամբ և Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով պայմանավորված տնտեսաքաղաքական անորոշությունները շարունակում են պահպանվել՝ իրենց ազդեցությունը թողնելով ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանի տնտեսական զարգացման հեռանկարների վրա: Վերոնշյալ հակամարտության պայմաններում ստեղծված քաղաքատնտեսական իրավիճակը 2022 թվականին դրական ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա, մասնավորապես՝

Արտաքին առևտրաշրջանառության մասով.

Ըստ ՀՀ ՎԿ-ի՝ 2022 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՀ արտաքին ել փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը աճել է շուրջ 70 տոկոսով, ինչի մեջ իր նշանակալի ազդեցությունն է ունեցել ՀՀ ամենախոշոր առևտրային գործընկերոջ՝ ՌԴ-ի հետ առևտրաշրջանառության ծավալի շուրջ 92 տոկոս աճը:

Դեպի ՀՀ ՌԴ քաղաքացիների ներհոսքի և վերջիններիս՝ ՀՀ համախառն սպառման վրա ունեցած դրական ազդեցության մասով.

Ըստ ՀՀ ԿԲ տվյալների՝ 2022 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ֆիզիկական անձանց կողմից ՀՀ բանկերի միջոցով ՌԴ-ից ստացված և ՌԴ փոխանցված դրամական փոխանցումների զուտ ներհոսքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է շուրջ 580 տոկոսով:

2022 թվականին ծառայությունների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 28.2%-ով: Նշանակալի աճ է գրանցվել նաև շինարարության (12.5%) և արդյունաբերության (7.9%) ոլորտներում: Ի թիվս վերոնշյալների՝ նկատելիորեն աճել է նաև տնտեսությունում առևտրի շրջանառության ծավալը՝ 17.0%: ՀՀ ԿԲ-ն 2022 թվականի դեկտեմբերին 2023 թվականի համար կանխատեսել է 4.6% տնտեսական աճ (ՀՀ ԿԲ գնաճի հաշվետվություն, 2022/4):

Միջազգային ապրանքահումքային շուկայում գների բարձրացմամբ, ինչպես նաև վերոնշյալ հակամարտության արդյունքում մատակարարման շղթաների խաթարումով պայմանավորված՝ ՀՀ տնտեսությունում գնաճային սպասումները շարունակում են մնալ բարձր՝ 2022 թվականի տարեվերջի դրությամբ 12-ամսյա գնաճը կազմել 8.6%: Գնաճային միջավայրով պայմանավորված՝ ս.թ. դեկտեմբերին ՀՀ ԿԲ Խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանել է 10.75%: Ըստ ՀՀ ԿԲ դիտարկման (ՀՀ ԿԲ գնաճի հաշվետվություն, 2022/4)՝ իրականացվող դրամավարկային քաղաքականությամբ և արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունների աստիճանաբար թուլացմամբ պայմանավորված՝ 12-ամսյա գնաճը 2023 թվականի ընթացքում կնվազի եւ կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2022թ. երկրորդ եռամսյակում Բանկը գործել է սահմանված ռիսկի ախորժակի սահմաններում: Կապիտալի համարժեքության նորմատիվի փաստացի արժեքը գերազանցել է ինչպես ներքին, այնպես էլ ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն շեմը: Բանկի ռիսկով կշռված ակտիվների գերակշիռ մասի աղբյուր է հանդիսանում վարկային ռիսկը, ինչը պայմանավորված է գործունեության հիմնական ուղղվածությամբ:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Բանկի չաշխատող ակտիվների ցուցանիշը 2022թ. վերջի դրությամբ կազմել է 0.95 տոկոս՝ նախորդ տարվա վերջի ցուցանիշի նկատմամբ նվազելով 0.73 տոկոսային կետով: Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումների մակարդակն ըստ տնտեսության ճյուղերի և խոշորագույն հաճախորդների գտնվել է սահմանված նպատակակետերի շրջաններում: 2022թ. իրականացված սթրես թեստերի արդյունքներով վարկային ռիսկի մեծությունը գտնվել է ընդունելի մակարդակում՝ հաշվի առնելով սթրեսային իրավիճակի հնարավոր ազդեցության և վերջինիս ի հայտ գալու հավանականության համադրությունը:

ՇՌԻԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Շուկայական ռիսկի հայեցակարգում հիմնական ռիսկի աղբյուրներն են արտարժութային փոխարժեքների և տոկոսադրույքների տատանողականությունը:

2022թ.-ի չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ ԿԲ-ն շարունակել է վարել զսպող դրամավարկային քաղաքականությունը, իսկ գնաճային բարձր տեմպերով պայմանավորված Վերաֆինանսավորման տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ բարձրացվել է 0.75%-ով կազմելով 10.75%:

Արտարժութային շուկայում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ և Եվրո/ՀՀ դրամ փոխարժեքները դրսևորել են բարձր տատանողականություն, իսկ ՌԴ ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքը ունեցել է առավել բարձր տատանողականություն՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ և դրանից բխող անորոշություններով:

Արտարժութային ռիսկի պահպանողական քաղաքականությունից ելնելով՝ Եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթների գծով էական բաց դիրքեր չեն պահվել: ԱՄՆ

դրվարով արտահայտված դիրքը հիմնականում եղել է երկար, սակայն գտնվել է Բանկի կողմից ընդունելի մակարդակում:

2022թ. չորրորդ եռամսյակում ընդհանուր առմամբ արտարժույթի վերագնահատումից գրանցվել է ոչ էական վնաս: Պարբերաբար իրականացվող սթրեսային սցենարների արդյունքում արտարժույթի վերագնահատումից հնարավոր կորուստները չեն գերազանցել սահմանված ռիսկի ախորժակի մեծությունները:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկում գործում է գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որի հիմնական բաղադրիչներից են Գործառնական ռիսկի միջադեպերի կառավարման գործուն մեխանիզմները և մշտական հսկողության համակարգի առկայությունը:

2021թ.-ից իրականացվում է Բանկի բոլոր գործընթացների վերլուծություն՝ ուղղված պոտենցիալ ռիսկերի բացահայտմանը: Պարբերաբար իրականացվում է Գործառնական ռիսկերի քարտեզի վերանայում՝ հիմնված նոր գործընթացների և գործընթացներում իրականացվող փոփոխությունների ուսումնասիրության, ռիսկերի բացահայտման վրա:

2022թ.-ից ստեղծվել և վարվում է գործառնական միջադեպերի բազա, որը հնարավորություն է տալիս արդյունավետորեն վերլուծել, գնահատել և բացահայտել առավել ռիսկային գործընթացները, վաղաժամ ահազանգեր ստանալ գործառնական ռիսկի միջադեպերի գծով, բարելավել ռիսկի զսպման մեխանիզմները և առավել թիրախային դարձնել մշտական հսկողության համակարգը: Ինչպես նաև Գործառնական միջադեպերի բազայում ներառված փաստացի պատահարների/միջադեպերի հիման վրա վերանայվում են նաև գործառնական ռիսկերի քարտեզում ներառված ռիսկերն ու դրանց

գնահատականները: 2020թ-ից ի վեր աշխատանքներ են տարվում հսկողական գործառույթների ավտոմատացման, արդյունավետ հաշվետվական համակարգի ապահովման ուղղությամբ: Վերջինս էապես կբարձրացնի հսկողության արդյունավետությունը, կկրճատի աշխատատարությունը և պոտենցիալ գործառնական ռիսկերի վաղաժամ հայտնաբերման ու կանխարգելման հնարավորություն կընձեռի:

Բանկի համար էական գործառնական ռիսկերի շարքին է դասվում տեղեկատվական անվտանգության ռիսկը: Թվային տեխնոլոգիաների զարգացման ներկայիս պայմաններում՝ տեղեկատվական անվտանգությունը հանդիսանում է ֆինանսաբանկային համակարգի առաջնային մարտահրավերներից: Բանկը էական ներդրումներ է իրականացնում տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովման համար՝ ներդնելով ժամանակակից անվտանգության համակարգեր:

Բանկի տեղեկատվական համակարգերում ներթափանցման փորձերի կանխարգելման նպատակով՝ պարբերաբար իրականացվում է Բանկի տեղեկատվական համակարգերի ներթափանցման թեստավորում (Penetration testing)՝ համագործակցելով աշխարհի առաջատար կազմակերպությունների հետ, որը հնարավորություն է տալիս վաղաժամ հայտնաբերել Բանկում խոցելիությունները և կանխարգելել դրանք: Բանկում պարբերաբար իրականացվում է համակարգերի ներթափանցման թեստավորում՝ օգտագործելով նաև ներքին ռեսուրսները:

Հարկ է նշել նաև, որ Բանկը տարիներ առաջ ներդրել է ISO/IEC27001:2013 ստանդարտին համապատասխան տեղեկատվական անվտանգության համակարգ, որը հավաստված է համապատասխան սերտիֆիկատով և իրականացվում է ստանդարտի պահանջներին համապատասխանության պարբերական վերահաստատում արտաքին աուդիտի կողմից: Բանկը սերտիֆիացվել է նաև ISO/IEC 27701:2019 Անձնական տվյալների կառավարման համակարգի հավաստագրով, ինչը Բանկում տվյալների մշակման գործընթացը դարձրել է էլ

ավելի ապահով ու կայուն և միջազգային լավագույն փորձին ու պահանջներին համապատասխան:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2022թ. IV եռամսյակի ընթացքում Բանկը պահպանել է իրացվելիության բարձր և հուսալի մակարդակ, ինչն արտացոլվում է իրացվելիության նորմատիվների՝ ՀՀ ԿԲ սահմանած սահմանաչափերից զգալիորեն բարձր ցուցանիշով: Նույնիսկ արտաքին միջավայրից եկող անորոշությունների պարագայում Բանկի ավանդային պորտֆելի գծով բացասական միտումներ չեն դիտվել: Հարկ է նշել, որ ընդհանուր պարտավորությունների կազմում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը կազմում է մոտ 43.03%:

Իրացվելիության աղբյուրների դիվերսիֆիկացման նկատառումներից ելնելով՝ Բանկը միջոցներ է ներգրավվում նաև միջազգային ֆինանսական կառույցներից, ինչպիսիք են ՎՋԵԲ, Proparco, Symbiotics, Triodos, EFSE և այլն:

Ավելցուկային իրացվելիության պաշարներն ուղղվում են ցածր ռիսկային ներդրումային գործառնությունների իրականացմանը, մասնավորապես պետական պարտատոմսերում ներդրումների իրականացում, միջբանկային վարկերի տրամադրում, հակադարձ ռեպո գործարքների իրականացում և այլն: Բանկի ներդրումային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ են կազմում առավել բարձր իրացվելիություն ունեցող ՀՀ պետական պարտատոմսերը՝ կազմելով պարտատոմսերի պորտֆելի մոտ 84.1%:

Իրացվելիության ռիսկի կառավարման հայեցակարգում պարբերաբար իրականացվող սթրես թեստերի արդյունքներով Բանկի իրացվելիության մակարդակը գնահատվել է բավարար:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Բանկի վարկային քաղաքականության հիմքում դրված է շրջակա միջավայրի և սոցիալական պատասխանատվության հայեցակարգը, որի շրջանակներում արգելվում է շրջակա միջավայրի վրա չափազանց բարձր ազդեցություն ունեցող գործունեության և նախագծերի ֆինանսավորումը: